

ՆՅՈՒԹԵՐ ԳԱՂՈՒԹԱՀԱՅ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

II

Ինչպես հայտնի է, Կրետե կղզին IV դարում Հռոմեական կայսրության բաժանման ժամանակ պաղմեց Արևելահռոմեական (հետագայում՝ Բյուզանդական) կայսրության մասն էր նրա կազմում մնաց մինչև 824 թ., երբ նվաճվեց Իսլամիայի արաբների կողմից։ Կղզին ազատագրեց 961 թ. բյուզանդական հայազգի զորավար (հետագայում կայսր) Նիկեիոս Փոկասը, որը, Կրետեի նվաճած քրիստոնյա բնակչությունը խտացնելու նպատակով, Փոքր Ասիայից այստեղ քրիստոնյաներ գաղթեցրեց, այդ թվում և բազմահազար հայերի, որոնց արձագանքներին կարելի է հանգիստ մինչև օրս կղզու տարբեր տեղանունների մեջ։ Խաչակրաց Չորրորդ արշավանքի ժամանակ (1204 թ.) Կրետեն նվաճվեց վենետիկցիների կողմից և նրանց տիրապետության տակ մնաց բավական երկար ժամանակ, մինչև, այսպես կոչված, «Կրետական մեծ պատերազմը» (1645—1669 թթ.), երբ այն նվաճեցին օսմանցիները։ Կրետեի երեք խոշոր քաղաքներից առաջինը գրավվեց Խանիան (1645 թ.), մի տարի անց՝ Ռեթիմնոն։ Թուրքերը ուժեղ դիմադրության հանդիպելին Կրետե գլխավոր քաղաքի՝ Կանդիայի (Հերակլիոն) գրավման համար մղած մարտերում և միայն 1669 թ. գրավեցին այն, որով ավարտվեց այդ պատերազմը, թեև դրանից հետո էլ երկար ժամանակ հույն բնակչությունը համառ դիմադրություն էր ցույց տալիս զավթիչներին։ Այդ պայքարում ինչպես կտեսնենք ստորև հրատարակվող փաստաթղթերից մեկում [տե՛ս փաստաթուղթ № 28 (1861)], մասնակցություն են ունեցել նաև հայերը։

Թուրքական վայրագ լուծը թոթափելու համար հույն ժողովուրդը հերոսական պայքար էր մղում, բազում անգամներ ապստամբում, բայց նրանց ընդվզումներն արյան մեջ էին խեղդվում։ Բայց ի վերջո, մեծ տերությունների ճնշման տակ, 1898 թ. Օսմանյան կառավարությունը ստիպված եղավ իր զորքերը դուրս բերել կղզուց։ Ստեղծվեց, այսպես կոչված, «Կրետական պետությունը», որը 1913 թ. դադարեց գոյություն ունենալուց և Կրետեն վերջնականապես միացավ Նունական թագավորությանը։

Կրետեում թուրքական տիրապետության շրջանից պահպանվել են Հերակլիոն քաղաքի թուրքական հոգևոր ատյանի արձանագրությունները։ Դրանք կազմում են 225 ստվար հատոր։ Այդ փաստաթղթերի փրկման գործում մեծ դեր է խաղացել հետազոտող Գեորգիոս Իկոնոմիդիսը¹, իսկ դրանց ուսումնասիրության գործը 1931 թ. սկսել է հայտնի հույն թուրքագետ Նիկոլայոս Ստավրինիդիսը, որն այն շարունակում է մինչև օրս²։ Նշենք, որ հոգևոր ատյաններ կային նաև Կրետեի երկու այլ խոշոր՝ Խանիա և Ռեթիմնոն քաղաքներում, որոնք ևս ունեին իրենց դիվանները։ Բայց Խանիայի դիվանը հրդեհի դոհ դարձավ 1897 թ., իսկ Ռեթիմնոնի դիվանը կորստյան մատնվեց 1945 թ. խառնակ ժամանակներում։ Ռեթիմնոնի դիվանից փրկվեց միայն մեկ հատոր, որը կազմեց «Հերակլիոնի թուրքական Դիվանի» № 1 գիրքը։ Այն բովանդակում է 1657—1659 թթ. վերաբերող փաստաթղթեր։

Հերակլիոնի հոգևոր ատյանի արձանագրությունների յուրաքանչյուր գիրքը բաղկացած է 40 սմ երկարությամբ և 15 սմ լայնությամբ 150-ից մինչև 485 էջերից։ Ավելորդ է այստեղ ասել, թե ինչ արժեք են ներկայացնում այդ արձանագրությունները կղզու պատմության, երկրում տիրող սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրության, այդ թվում և հայ ժողովրդի,

¹ Գ. Իկոնոմիդիսը առանձին հատորներ անհաշու կերպով իրար միացնելով, կազմել է սովել, որով այդ 225 հատորները այժմ դարձել են 162 միավոր։

² 1983 թ. Նոյեմբերին Կրետե այցելության ժամանակ մեզ բախտ վիճակվեց անձամբ ծանոթանալու գիտության մոտ 90-ամյա այդ իսկական մշակի հետ, որը հայ ժողովրդի նկատմամբ ամենաշնորհագրություններն է տաժում և ամեն կերպ շանաց մեզ օգտակար լինելու։

տվյալ դեպքում, Կրետեի հայկական գաղութի պատմության համար, Դեռևս 1938 թ. անվանի բյուզանդագետ Ն. Տոմազակիսին գրած մի նամակում Ն. Ստավրինիդիսը տեղեկացնում էր. թե 1670—1700 թթ. վերաբերող իր թարգմանած փաստաթղթերը լի են Հերակլիոնի հայերի վերաբերյալ տեղեկություններով, այն աստիճան, որ ենթադրել են տալիս, թե Կրետեի մայրաքաղաքը հայերով էր բնակեցված³։ Այդ փաստաթղթերից կարելի է հղբակացնել նաև, որ XVII դ. կեսերին Հայաստանից, հատկապես Արևելյան Հայաստանից, Կրետեում եղել է հայերի ուժեղ գաղթականական շարժում⁴։

Ն. Ստավրինիդիսի մեղմաչան աշխատանքի արգասիքն են հանդիսանալու այդ փաստաթղթերի հունարեն թարգմանության հինգ սովոր հատորները, որոնցից մինչև օրս լույս են տեսել երեքը՝ Դրանք ընտրովի բովանդակում են 1657—1715 թթ. փաստաթղթերի հունարեն թարգմանությունները։ Ն. Ստավրինիդիսը փաստաթղթերի մի մասը թարգմանել է ամբողջությամբ. մյուսը՝ ներկայացրել համառոտ Դրան հետևել ենք և մենք, համառոտ բերված փաստաթղթերի սկզբում հատուկ նշելով այդ հանգամանքը (Հ. Թ.⁵ համառոտ թարգմանություն)։ Ն. Ստավրինիդիսը, հասկանալի է, նպատակ չի ունեցել ընտրել այն փաստաթղթերը, որոնք վերաբերում են կղզու հայերին, բայց հակառակ դրան հրատարակված երեք հատորներում արժեքավոր փաստաթղթեր կան նաև հայերի մասին, որոնք հայերեն թարգմանությամբ ընտրովի բերում ենք ստորև։ Հասկանալի է, սույն հրապարակումը տեղեկատու բնույթի է և նպատակ ունի հայագետներին ցույց տալ, թե ինչպիսի նյութեր կարող է ապագա հայ ուսումնասիրողը գտնել «Հերակլիոնի թուրքական Դիվանում», քանզի վերջին հաշվով մենք տալիս ենք թարգմանության թարգմանությունը, և ոչ թարգմանությունը թուրքերեն բնագրից։

Յուրաքանչյուր փաստաթղթի սկզբում փակագծերում նշված համարը Ն. Ստավրինիդիսի թարգմանության համարն է։ Փաստաթղթերի վերնագրերը Ստավրինիդիսին են։ Նա է նաև հիշերթի թվականը մեր թվականի վերածողը։ «Հ. Թ. 3» հապավումը նշանակում է «Հերակլիոնի թուրքական Դիվան», դրան հաջորդող համարները՝ այդ Դիվանում տվյալ հատորի կրած թիվը և փաստաթղթի էջահամարը։ Մանոթագրությունները և բացատրությունները մերն են։ Եթե այդպիսիք տվել է Ստավրինիդիսը, այդ մասին նշվում է հատուկ։ Յուրաքանչյուր փաստաթղթի վերջում նշվում է Ստավրինիդիսի տվյալ հատորի էջը։

ՀՐԱՉ ԲԱՐՔԻՎԱՅԱՆ

Μεταφράσεις Τουρκικών 'Ιστορικών 'Εγγράφων ἀφορώντων εἰς τὴν ἱστορίαν τῆς Κρήτης ὑπὸ Νικολάου Σταυρινίδου τόμος Α'. ἔγγραφα τῆς περιόδου ἐτῶν 1657—1672, ἐγείρας 1067—1082, 'Ηράκλειον Κρήτης 1975.

Նիկոլայոս Ս. Ստավրինիդիս, Կրետեի պատմության վերաբերյալ բուրժուական պատմական փաստաթղթերի թարգմանություն, հատոր առաջին, մ. թ. 1657—1672 և ճիշդերթի 1067—1082 թթ. շրջանի փաստաթղթեր, Կրետեի Հերակլիոն, 1975:

³ ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտություններ», 1982, № 8, էջ 98: Ն. Ստավրինիդիսը մոտավորապես նույն բանն է ասում իր հրատարակած փաստաթղթերի առաջին հատորում (էջ XXVI):

⁴ Այդ մասին են վկայում նախ և առաջ Հերակլիոնի հայկական եկեղեցու բակում գտնվող տապանաքերը («Պատմա-բանասիրական հանդես», 1984, № 1), ինչպես և Կրետեի հանրապետության թանգարանում պահվող հայերեն տապանաքերի արձանագրությունները (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտություններ», 1982, № 8): Նշենք, որ այդ ժամանակաշրջանում Հայաստանից հայեր են գաղթել ոչ միայն Կրետե, այլև Հունաստանի մայրցամաք։ Այդ մասին է վկայում Դաշտի Ավագի որդի Կարապետի տապանաքարի 1691 թվակիր հայերեն արձանագրությունը, որ հրատարակել է Ն. Յաննոպուլոսը։ Նրա հոմարեն հոդվածի հայերեն թարգմանությունը տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտություններ», 1987 № 9:

1 (46)

ՀՈՒՅՆ ԱՂՋԻԿՆԵՐԻ ՀԵՏ ԱՄՈՒՍՆԱՅՈՂ ՌԵՔԻՄԵՆՏԻ ՀԱՅՆՐ

Հ. Բ. Դ., գիրք 1, էջ 34

1068 թ. շարան ամսի 20-ին
22 մայիսի 1653թ.

Հ. Բ. Ռեքիմենի վոյեվոդա Հյուսիսին ազան հայց է ներկայացնում Ռեքիմենի Օրոս գյուղից Անետայի նկատմամբ, ներկայումս Ռեքիմենի (նահանգի) Վարուսիոն (գյուղի) բնակիչ, հացագործ Աստուրի հետ ապօրինի կարգով ամուսնանալու համար: Անետան իր պաշտպանականում ասում է, թե նախապես, իրոք, ամուսնացել էր հայ Մուրադի հետ, սակայն այն պատճառով, որ պարտքերի համար նա հետապնդվում էր, ինձ լքեց և գնաց Եգիպտոս: Միջոցներ չունենալով պահելու այդ ամուսնուց ունեցած իմ արու զավակին, ստիպված երկրորդ անգամ ամուսնացա Աստուրի հետ: Այս երկրորդ ամուսնության վերաբերյալ բանավոր արտահայտվել էր նայիբ Օսման էֆենդին, որը և թույլատրեց ամուսնության կատարումը: (Հոգևոր ատյանի) պաշտոնյայի պահանջով այս գործը արձանագրվեց այստեղ՝ 1068 թ. շարան ամսի 20-ին:

էջ 31

2 (57)

ՀԱՅՆՐԻ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ

Հ. Բ. Դ., գիրք 1, էջ 38

1068 թ. շալ ամսի 15-ին
15-ը հուլիսի 1658 թ.

Ամուսինը՝ Վարդան, Թոմի որդի, ծագումով հայ, Վարուսիոնի բնակիչ: Նրա լիազոր ներկայացուցիչը՝ Միլոյի որդի Շեհապ: Նրա վկաները՝ Աբդուլլահի որդի Դերվիշ և Աբդուլլահի որդի Ահմետ բեշե: Կինը՝ Կույս Կատերինան՝ դուստրը Բոաննիսի: Նրա լիազոր ներկայացուցիչը՝ Աբդուլլահի որդի Սեֆեր: Ամուսնական նվեր՝ ոչ կանխավ տրվող՝ երեք հազար Nakt (նաղգ) օրվա գնով, այսինքն՝ երեք հազար սպիտակ, ոչ պակաս: Այս ամուսնությունը կատարվեց 1068 թ. շալ ամսի մեջտեղը: Վկաները. Վելի բեշե թոփչը², Յուսուֆ բին Աբդուլլահ, Դերվիշ բին Աբդուլլահ և ուրիշներ:

էջ 38-39

3 (131)

ՀԱՅ ՈՍԿԵՐՉԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՌԵՔԻՄԵՆՏԻՄ

Հ. Բ. Դ., գիրք 1, էջ 73

1069 թ. չեմադիյու-լ-եվլել ամսի 28-ին
20 փետրվարի 1659 թ.

Ճուցակ Ռեքիմենի Վարուսիոն (գյուղում) սպանված հայ ոսկերիչ Աբրոյի ունեցվածքի, որ ժառանգների չգոյության պատճառով ստացել է պետական գանձարանի գանձապահ Ահմետ բեշեն և Հոգևոր ատյանի միջոցով վաճառքի հանվել 1069 թ. չեմադիյու-լ-եվլել ամսի 28-ին:

Մեկ անտերի³, արժեքը՝ 24 (սպիտակ), մեկ սև դոլամա⁴, արժեքը 34

1 Ռեքիմեն, շրջան Կրետեի հյուսիսում, Հերակլիոնի և Խանիայի միջև: Շրջանի ղեկավոր քաղաքը կոչվում է Ռեքիմեն:

2 Մանոթ. Ստավրինդիսի. թնթանոթածիգ:

3 Լանացի չոր՝ թեքով, խալաթ:

4 Պատմական, քաֆթան:

(սպիտակ), մեկ կաթսա՝ 71 (սպիտակ), երկու փոքր կաթսա՝ 82, մեկ թաս՝ 26, մեկ գունավոր թաշկինակ՝ 80, մեկ գունավոր փեշտիմալ⁵ արժեքը 46, մեկ հրացան՝ 645, ոսկերչի գործիքներ՝ 1520, արծաթե դրամներ՝ 130, մեկ սովորական դաշույն՝ 110, մեկ արծաթե դաշույն՝ 280, մեկ խանչալ՝ 1110, մեկ արծաթե դաշույն՝ 450 (սպիտակ):

Շահեն անունով պատանի (Արրոն) մի ոմն հարկատուից՝ քսան ղուրուշով առել էր նրան, նրա սննդի համար օրական երեք սպիտակ ծախսելու պարտավորությամբ:

Ընդամենը՝ 4.085 (սպիտակ):

Մախսեր. թաղման, հայտարարության, ունեցվածքի կարգավորման, վկաների կանչման և քարտուղարի՝ 700 (սպիտակ): Մնացորդը 3385 (սպիտակ):

էջ 91—92

4 (246)

ԿԱՆԴԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՅԱԳՈՐԾԻ ԿԱՄԱԿՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Հ. թ. Դ., գիրք 2, էջ 53

1081 թ. շեմադիյու-լ-ախըր ամսի 3-ին
18 հոկտեմբերի 1670 թ.

Հ. թ. Կանդիայի սիպահիններից Վելիի որդի Օմեր բեյը դատ է հարուցում Կանդիայի Մահմուտ Քետխուդա մզկիթի մոտ բնակվող հայ հացագործ Դեմուրի որդի Ավանոսի դեմ, քանզի թեև ինքը՝ Ավանոսը, հայ էսպահանի երաշխավորն էր՝ հարյուր վաթսուհինգ ասլան ղուրուշի և որոնց դիմաց տվել էր քսանմեկ ղուրուշ, այնուամենայնիվ իրեն՝ Օմեր բեյին, չի տալիս հարյուր քառասուն շորս ղուրուշի մնացած գումարը, ուրանալով, թե էսպահանի երաշխավորն էր: Բերվում են մահմեդական վկաներ, որոնք ցուցմունք են տալիս, որ պատասխանորդն իրոք պարտք ստացողի երաշխավորն էր: Դրանից հետո Հոգևոր ատյանի նախագահը վկանների արժանահավատության մասին տեղեկություններ է հայցում իմամի ու նրա թեմի բնակիչներից և գրական պատասխան ստանալով, կարգադրում է պատասխանորդ հայ Ավանոսին՝ Օմեր բեյին վճարել պարտքի մնացած գումարը:

էջ 173

5 (253)

ԿԱՆԴԻԱՅԻ ՀԱՅ ԵՐԿԱԹԱԳՈՐԾՆԵՐ, ԹԱՄԲԱԳՈՐԾՆԵՐ ԵՎ ԶՐԱՂԱՑՊԱՆՆԵՐ

Հ. թ. Դ., գիրք 2, էջ 57

1081 թ. շեմադիյու-լ-ախըր ամսի 22-ին
17 հոկտեմբերի 1670 թ.

Հ. թ. Կանդիա քաղաքի Քետխուդա բեյ մզկիթի մոտի բնակիչ Դիմիտրիոսի որդի Խոաննիսը դատ է հարուցում հայ երկաթագործ Կարապետի՝ Ասլանի որդու դեմ, որովհետև նա՝ Կարապետը, չի վերադարձնում իրեն շերիֆի տասը ֆլորինները և տասը «սուլիա» ղուրուշները, որ նրան էր վստահել և մոտը պահ դրել: Պատասխանող Կարապետն իր պաշտպանականում ասում է, որ իր դեմ դատ հարուցողն իրոք իրեն վստահեց հիշյալ գումարը, բայց ինքը կորցրել է այն, բայց միաժամանակ ավելացրեց, որ քսան ասլան ղուրուշով (Խոաննիսի) հետ

⁵ Խոհանոցի կամ բազմիքի գոգնոց:

⁶ Մայրը կոր երկար դաշույն, որ օգտագործվում էր ձեռնամարտի ժամանակ:

⁷ Փաստաթղթերում հարկատու ասելով նկատի են առնվում ոչ մահմեդականները՝ հույները, հայերը, հրեաները և այլն:

համաձայնության էր եկել: Այդ գումարը նա տվել է և դրանով փակվել է նրանց միջև եղած վեճը: Դատ հարուցողը ուրանում է նման գործարք: Դրա վրա բերվում են Կանդիայի թամբագործների և ջրաղացպանների համաքարոթյունից հայ վկաներ, որոնք հավաստում են, որ իրոք դատվող կողմերը համաձայնության էին եկել հիշյալ գումարով: Որով իրանհիսի հայցը մերժվում է:

էջ 176

6 (324)

ՀԱՅ ՀԱՅԱԳՈՐԾՆԵՐ: ԿԵՐԱ ՊՍԻՆՈՍՈՍՏՐԱ ԹԱՂԱՄԱՍ

Հ. Թ., դիրք 2, էջ 201

1081 թ. շեալ ամսի 7-ին
16 փետրվարի 1671 թ.

Հ. Թ. Կանդիայի հացագործների համաքարոթյունների անդամներ, հարկատուներ Դավթի որդի Կարապետը և նրա որդի Նղիեն, Ահմետի որդի թուփչիների շավուշ⁸ Ալի աղային հարյուր քսան հինգ ասլան դուրուշով վաճառում են ռֆրանկի տուն՝ անունով հայտնի ենիչարների աղայի մզկիթի մոտ գտնվող Կերա Պսինոսոստրա կոչվող թաղում եղած իրենց մի տունը, որ երեք կողմից նայում է հանրային փողոցին և Նրլիների չորրաջի Մեհմետ աղայի անշարժ ունեցվածքին: Տունը բաղկացած է երկրորդ հարկի երեք, առաջին հարկի հինգ սենյակներից, պարտեզից և հորից: Տունը կառուցված է յոթ կանգուն երկարությամբ և երեսուն յոթ կանգուն լայնությամբ հողամասի վրա:

էջ 224

7 (337)

ՀԱՅ ՀԱՅԱԳՈՐԾԻ ՀԵՏ ԹՈՒՐԲԻ ՎԵՃ

Հ. Թ., դիրք 2, էջ 107

1081 թ. շեալ ամսի 25-ին
6 մարտի 1671 թ.

Հ. Թ. Արդեն Մեծ Վեզիր, Նորին գերազանցություն Ահմետ փաշայի սըրբազան մզկիթի մոտ բնակվող չուխաշի⁹ էբու Բեքիր շեյխին իր հարևան Քիրքուրի որդի հացագործ Կարաբաշի դեմ դատ է հարուցում, որովհետև նա իր փոխվրա կառուցելով մի սենյակ, վերահիշյալ մզկիթի վակֆային նվիրատվություններով, սենյակի գերանը հենեց կից գտնվող իր խանութի պատի վրա: Հոգևոր ատյանի կողմից ուղարկվում է մեկանա¹⁰ Մեհմետը, որն իր հետ առնելով և պետական ճարտարապետ Սեֆերին, պարզեց, որ իրոք, Կարաբաշը իր սենյակի գերանը հենել է էբու Բեքիր շեյխի խանութի պատի վրա: Վճիռ է հանվում, որպեսզի կտրվի գերանի այն մասը, որ հենվում է բողոքարկողի պատի վրա:

էջ 233

8 (438)

ՀԱՅՆՐԻՆ ԻՐԵՆՑ ՀԱՆԳՈՒՅՑԱԼՆԵՐԻՆ ԹԱՂԵԼՈՒ ՀԱՄԱՐ
ԿԸԶԸԼ ԹԱԲԻԱՅԻՑ ԴՈՒՐՍ ՀՈՂԱՄԱՍԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

Հ. Թ., դիրք 3, էջ 16

1082 թ. օերի՝ յուլ-եմվել ամսի 22-ին
30 հուլիսի 1671 թ.

Կանդիայի քաղաքում բնակվող և հայոց համայնքին պատկանող Մուխտարի որդի Սիմոնը, Սեֆերի որդի Յաղուբը, Քիրքուրի որդի Պողոսը, Բաղդասարի որդիներ Աբրահամը, Խաչատուրն ու Ռուհջանը, և ուրիշներ, ներկա-

⁸ Թնթանոթաձիգների հրամանատար:⁹ Մահուղագործ:¹⁰ Տեք, շեյխերի և մահմեդական գիտունների տիտղոս:

յանալով այս սրբազան ատյանի առջև, յուրաքանչյուրն իր կողմից հետևյալ ցուցմունքները տվեցին. քանի որ մեր հանգուցյալներին (բնագրում՝ սատակողներին) թաղելու անհրաժեշտություն ծագեց, դիմումով խնդրեցինք, որ պետքի նրանց թաղման համար քաղաքից դուրս մեզ հողամաս հատկացվի: Այդ առթիվ կրղըլ թաբիայի մոտի արոտատեղից մեզ շորս դոնյում¹¹ հողի մի բույուրլտի¹² տրվեց: Այժմ խնդրում ենք, որ հիշյալ վայրը Հոգևոր ատյանից մարգ ուղարկվի և սահմանի այդ տարածությունը:

Ասելով դա, նրանք ներկայացրին իրենց ձեռքում եղած հրամանը, որը մենք գտանք իրենց բանավոր ցուցմունքին համապատասխանող:

Որով Հոգևոր ատյանի կողմից մեկնա Արու Ջելիլ էֆենդին ուղարկվեց: Լինելով տեղում, նա սույն արձանագրության տակ հիշվող մահմեդականների ներկայությամբ որոշեց և չափեց ծովափի կողմից¹³ մի հողատարածություն, որպեսզի այն ռգտագործվի հայկական համայնքի հանգուցյալների թաղման համար: Հողատարածությունը բաղկացած է շորս դոնյումից, այն մի կողմից սահմանակից է անհավատներին¹⁴ գերեզմանոցին, իսկ մյուս կողմից՝ անհավատ հրեաների հանգուցյալների թաղման վայրին, երկու կողմից ունենալով արոտավայր: Միաժամանակ (հայոց գերեզմանատան) շուրջ դրվեցին սահմանանշաններ: Ուղարկված մեկնան տեղում ամեն ինչ արձանագրելով, վերադարձավ Հոգևոր ատյան, որտեղ նույն բանը մեզ հաղորդեց բանավոր:

Դիմումի համաձայն վերոհիշյալը մտցվեց (արձանագրությունների սույն գրքում) հազար ութսուն երկու թվականի ռերի՝ յուր-լ-եվել ամսի քսան երկուսին:

Վկաները. Օսմանի որդի հայտնի մեծատուն, կայազորի պետի քեմալուդա Հյուսեին աղան, Մահմուտի որդի Ալի աղան՝ հայտնի սիպահի և չավուշների գանձապահը, Օսմանի որդի Հասան բեշեն՝ հետևակազորից, Մուստաֆայի որդի Հյուսեին բեյը և ուրիշներ:

էջ 350—351

9 (472)

ԱԿԱՆԱՀԱՏ ՀԱՅԵՐ ԿԱՆԴԻԱՅԻ ՊԱՇԱՐՄԱՆ ՕՐԵՐԻՆ

Հ. Թ. Դ., գիրք 3, էջ 52

1082 թ. չեմազիյու-լ-եվել ամսի 12-ին
16 սեպտեմբերի 1671 թ.

Հ. Թ. Սեֆերի որդի Աբրահամը, հարկատու, կանգնելով այս Սրբազան ատյանի առջև, դատ հարուցեց ընդդեմ Դաուդի որդի Ասլանի¹⁵, նույնպես հարկատու, և նրա ներկայությամբ տվեց հետևյալ ցուցմունքը: Ճերբ Կանդիա քաղաքի պաշարման ժամանակ Ասլանը հրաման ստացավ ականներ փորել, նա, այդ աշխատանքից խուսափելու (գլուխը փրկելու) համար, ինձ խնդրեց

¹¹ Տարածության չափ: Հավասար է 919,3 քառակուսի մետրի:

¹² Գրավոր հրաման, կարգադրություն:

¹³ Մանոթ. Ստավրինդիսի. ինչպես կարելի է եզրակացնել սույն փաստաթղթից, հայոց համայնքին նախապես տրամադրվել էր, այն էլ ծովահայաց կողմում, իրենց հանգուցյալների թաղման համար կրկնակի մեծության հողատարածություն: Եվ դա այն պատճառով, որ Կանդիան թուրքերի կողմից գրավվելուց հետո առաջին տարիներին հայերը թվով գերազանցում էին աղղափառ (հույն) համայնքի բնակչությանը: Բայց երևում է, որ ավելի ուշ երկու համայնքները համաձայնության եկան և փոխանակեցին իրենց հողատարածությունները, որով աղղափառների համայնքը մինչև վերջերս իր ձեռքում ուներ ծովահայաց կրկնակի տարածություն:

¹⁴ Տվյալ դեպքում նկատի ունի հույներին:

¹⁵ Մանոթ. Ստավրինդիսի. և՛ դատ հարուցողի, և՛ պատասխանորդի անձնանունները գործածական են հայերի չրջանում: Ինչպես հայտնի է, Քյոփրուլու Ֆազլի Ահմետ փաշայի կողմից Կրեմո բերվեց մոտ հազար հայ՝ Կանդիայի պաշարման վերջին չրջանում ստորգետնյա անցքեր փորելու համար:

իր՝ Ասլանի, հաշվին ականահատման վերակացու...¹⁶ աղային 33 ղուրուշ վճարել, որոնք, ասաց, իր՝ Ասլանի, պարտքն են և պիտի հատուցի: Իր խրնդ-րանքի համաձայն ես...¹⁷ աղային վճարեցի 33 ղուրուշը: Ասլանը բազում մարդկանց ներկայության ասաց, թե ինքը այդ գումարն ինձ պարտք է: Խընդ-րում եմ հարցնեք նրան: Պատասխանորդն ուրանում է եղածը: Որպես վկա են հրավիրվում Ռեսուլի որդի Ռեջեբ բեշեն և Մուսայի որդի հարկատու Աս-լանը: Նրանք ցուցմունք են տալիս, որ պատասխանորդն իրենց ներկայության Աբրահամին խոստովանեց, թե այդ գումարը նրան պարտք է: Ասլանին պար-տավորեցնում են վճարել իր պարտքը:

էջ 380

Μεταφράσεις Τουρκικών 'Ιστορικών 'Εγγράφων ἀπορώντων εἰς τὴν ἱστορίαν τῆς Κρήτης ὑπὸ Νικολάου Σταυρινίδου, τόμος Β'. Ἐγγραφα τῆς περιόδου ἐτῶν 1672—1694. εἰσεύρα 1083—1105, 'Ερᾶχλειον Κρήτης 1976

Նիկոլայուս Ս. Ստավրինիդիս, Կրեանի պատմության վերաբերյալ բուրժևակն պատմական փաստաթղթերի թարգմանություն, հատոր երկրորդ, մ. թ. 1672—1694 և հիշրեթի 1083—1105 թթ. շրջանի փաստաթղթեր, Կրեանի Հերակլիոն, 1976:

10 (537)

ՀԱՅ ՀԱՅԱԳՈՐԾԻ ՅՈՒՅՄՈՒՆՔԸ

2. թ. Դ., դիրք 3, էջ 193

1083 թ. ռեյեր ամսի 20-ին.
23 նոյեմբերի 1671 թ.

Կումրիի (Կսրքդ) որդի Սահակը, հայ, Կանդիա քաղաքի հացագործների համքարությունից, կանգնելով այս Սրբազան ատյանի առջև, նախկինում Կրետեի Դեֆտերդար վսեմափայլ էրու Բեքիր էֆենդիի լիազոր ներկայացուցիչ Ահմետ աղայի ներկայությամբ տվեց հետևյալ ցուցմունքը. «(էրու Բեքիր էֆենդիի) վսեմափայլ լիազորից գնած ցորենի արժեքից նրան պարտք մնացի 72 հազար սպիտակ: Վսեմափայլի՝ Ադրիանուպոլիս մեկնելուց հետո, գնեցի և ստացա այս ատյանում ներկա նրա ներկայացուցիչ խալիլ էֆենդիից 1333 քիլ¹⁸ ցորեն, քիլեն 85 սպիտակով: Արժեքի դիմաց հիշյալ խալիլ էֆենդիին տվեցի 378 դանթար¹⁹ պաքսիմադ, որոնց արժեքը ծածկեց նրա կողմից ստա-ցածս ցորենի արժեքը: Սակայն 72 հազար սպիտակը մնում է իմ պարտքը, որը պարտավորվում եմ վճարել»:

Այդ բանը Հոգևոր ատյանի կողմից վավերացվելուց հետո, նրանց խնդրանքով գործն արձանագրվեց այստեղ՝ հազար ութսուն երկու թվականի ռեջեբ ամսի 20-ին:

Վկաները. Մուստաֆայի որդի Մահմուտ բեյ, Մեհմետի որդի Մեհմետ բեշե, Հասանի որդի էրու Բեքիր բեշե, խալիլի որդի խիմմետ բեշե, Մուստաֆայի որդի Հուսեին բեյ և ուրիշներ:

էջ 5—6:

¹⁶ Բնագրում կաշառք վերցնող աղայի անունը հասկանալի պատճառով չի բերված:

¹⁷ Տե՛ս նախորդ ծանոթագրությունը:

¹⁸ Ցորենաչափ: Մեկ քիլեն հավասար է 40—45 կիլոգրամի:

¹⁹ Մեկ դանթարը հավասար է 50 կիլոգրամի:

11 (565)

ՎԵՃԵՐ (ՏԱՐԲԵՐ) ՀԱՄԲԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՐՀԵՍՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Հ. Բ. Դ., գիրք 3, էջ 239

1082 թ. շա'րան ամսի 25-ին
27 դեկտեմբերի 1671 թ.

Գյուլսեֆերի որդի Պողոսը,²⁰ որդի Թոմասը, հայեր Կանդիա քաղաքի մեխագործների համաքարությունից, ներկայանալով այս Սրբազան ատյանի առջև, արհեստավորներ, հարկատուներ Աբաջիողլու Մանասարի և Պանայոտի ներկայությամբ տվեցին հետևյալ ցուցմունքը.

«Աբաջիողլու Մանասարը և Պանայոտը հակառակ որ կողպեքագործ են, զբաղվում են նաև մեր՝ մեխագործի արհեստով, մի բան, որ մեր արհեստում վաճառաշահության նվազություն և տակնավրայություն առաջացրեց: Ուստի խնդրում ենք, որ այս հարցը քննվի և նրանց կարգադրություն արվի զբաղվելու իրենց արհեստով և չզբաղվեն մեխագործի մեր արհեստով»:

Նրանք, ում դեմ դատ է հարուցվել, հարցաքննության ժամանակ խոստովանեցին, որ կողպեքագործ են, բայց նպատակ ունեն զբաղվելու նաև մեխագործի արհեստով: Որպեսզի չխախտվի արհեստավորների միջև շուկայում եղած անդորրն ու կարգն ու կանոնը, հրամայեցինք վերոհիշյալ Աբաջիողլու Մանասարին և Պանայոտին չզբաղվեն դատ հարուցող մեխագործների արհեստով: Համաձայն խնդրանքի այս գործը արձանագրվեց այստեղ հազար ութսուն երկու թվականի շա'րան ամսի քսանհինգին:

Վկաները. Մուստաֆայի որդի Հյուսեին բեյ, Աբդուլլահի որդի Յուսուֆ բեյ, թղթատար, Աբդուլլահի որդի Ալի չելբերի, Հյուսեին չելբերի և ուրիշներ:

էջ 25—26

12(579)

ՀԱՅ ԼՈՒՄԱՅԱՓՈԽԸ՝ ԿԱՆԴԻԱՅԻ ՄՈՄԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՀԵՍՏԱՆՈՑԻ ՀԱՐԿԻ ԿԱՊԱՆԱՌՈՒ

Հ. Բ. Դ., գիրք 3, էջ 37

1083 թ. սաֆեր ամսի 1-ին
29 մայիսի 1672 թ.

Այս Սրբազան ատյանին ներկայացավ Կրետե կղզու Դեֆտերդար ազնվափայլ Մհմետ էֆենդին և դատ հարուցեց Կանդիայի ժամանակավոր բնակիչ լումայափոխ հայ Սեֆերի՝ որդի Կազերի դեմ և նրա ներկայությամբ տվեց հետևյալ ցուցմունքը.

«Արդեն Վեզիրի աստիճանի պաշտիվն ստացած պաշտոնավարող առաջին կարգի դեֆտերդար ամենաիմաստուն վեզիր ու փառավոր մուսիր, վսեմափայլ Ահմետ փաշան, երբ նա Կրետեում էր, Կանդիայում գտնվող մոմի արհեստանոցի 1080 թ. (մ. թ. 1669 թ.) հարկերի հավաքումը՝ սկսյալ շա'րան ամսից երեսուն հազար սպիտակով տվել էր այս ատյանում ներկա Սեֆերին: Նա, օգտագործելով մոմի արհեստանոցը մի ամբողջ տարի, հարկ առավ նաև 1081 (մ. թ. 1670 թ.) թվականից յոթանասունհինգ օրվա համար: Որով մոկատայից²¹ պարտք է մնում 6160 սպիտակ: Խնդրում եմ հարցը քննության ենթարկել»:

Դրանից հետո հարցրեցինք հիշյալ Սեֆերին, որ պատասխանելով ասաց հետևյալը. «Իրոք, վսեմափայլ Ահմետ փաշան ինձ էր հանձնել մոմի հիշյալ արհեստանոցը 1080 (1669) թվականի համար երեսուն հազար սպիտակի դիմաց և ես ընդունեցի դա: Սակայն այդ տարվա զի-լ-կադե ամսին վճարեցի տասնհինգ հազար սպիտակ, իսկ զի-լ-հիջթե ամսին ևս տասնհինգ հազար սպիտակ, որն արձանագրվեց հաշվեմատյանում և ես ստացա այդ գրության

²⁰ Բնագրում եղծված է:

²¹ Մուկատա, վարձավճար:

պատճենը: Մոմի այս արհեստանոցը իմ տրամադրության տակ էր միայն մեկ տարի: Այդ ասելուց հետո, նա ցույց տվեց հաշվեմատյանի դրության պատճենը, որը կրում է վսեմափայլ Ահմետ փաշայի կնիքը, որով գտանք, որ այն համապատասխանում է իր խոստովանության: Երբ դրանից պարզվեց, որ հաշորդ՝ 1081 թ. (1670)՝ ամար Սեֆերից հետո մոմի արհեստանոցի հարկերի ալլ գանձող շնորհյալացավ, և որ արհեստանոցը մնաց փակ ու անգործ, այս գործը դիմումի համաձայն արձանագրվեց այստեղ՝ հազար ութսուն երեք թվականի սաֆեր ամսի մեկին:

Վկաները. Ալիի որդի Ռեշեբ բեյ, Աբդուլլահի որդի Ալի շեյխի, Մուստաֆայի որդի Հյուսեին բեյ, Աբդուլլահի որդի Յուսուֆ բեյ, թղթատար, Ալիի որդի Մահմետ, Աբդուլլահի որդի Ահմետ բեյ և ուրիշներ:

էջ 35

13 (615)

ԿԱՆԴԻԱՅԻ ՄԵՅՄԱՐԻ ՆՇԱՆԱԿՈՒՄ: ՓԱՇԱՅԻ ՀՐԱՄԱՆԸ

Հ. Թ., դիրք 4, էջ 6

1083 թ. զի-լ-կադե ամսի 25-ին
13 մարտի 1673 թ.

Կանդիայի Հոգևոր ատյանի ամենաիմաստուն և վսեմափայլ նախագահ: Այն պատճառով, որ ներկա գրությունը ներկայացնող հարկատու խաչերը²² ճարտարապետական գործերում ունի փորձ և հմտություն, նրան են հանձնարարված Կանդիայի ճարտարապետի պարտականությունները և նրան հանձնարված նշանակման վերաբերյալ հատուկ գրությունը: Ելնելով դրանից, այսօրվանից և եթ Քերդի²³ ներսում գտնվող շենքերի բոլոր տները պետք է դիմեն նրան: Առանց նրա թույլտվության ոչ մի շինարարական աշխատանք չպետք է ուրիշին հանձնարարվի: Բոլոր շինարարները, որմնադիրները, հյուսնները և այդ համաքարության աշխատողները պետք է նրան ճանաչեն իրենց ճարտարապետն ու նախագահը: Ամեն տեսակ ճարտարապետական գործի համար պետք է դիմեն նրան և ոչ ոք առանց նրա կարծիքի և խորհրդի ոչ մի գործ չպետք է նախաձեռնի: Դրան է վերաբերում ահա սույն գրությունը²⁴:

էջ 60:

14 (727)

...²⁵ ՀԱՅ ԱՐՐՈՆ²⁶ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՄԱՏԱԿԱՐԱՐ

Հ. Թ., դիրք 5, էջ 62

1084 թ. շա'րան ամսի 19-ին,
29 նոյեմբերի 1673 թ.

Հ. Թ. ի որդի հայ Աբբոն, Կայսերական բանակի մատակարարը, իր լիազոր խաչատուրի միջոցով հայտնում է, որ Կրետեի դեֆտերգար Ահմետ էֆենդիից ստացել է վերջինիս իր պարտք տված 4.700 ասլան դուրուլը:

էջ 162:

²² Մանոթ. Ստավրինդիսի. խոսքը, անկասկած, հայի է վերաբերում:

²³ Քերդ էր կոչվում Կանդիա քաղաքը:

²⁴ Վասպուրականում, Մուկուա շայի ձախ ափին, հայկական Մամրտանք կամ Մարմոտանք գավառի Ապարանք գյուղում 1660 թ. կառուցված մի աղբյուրի վրա պահպանվել է «մէմար» (ճարտարապետ) խաչատուրի հետևյալ վիմագիր արձանագրությունը. «Շինեցաւ ձեռամբ մէմար խաչատուրին թվին ՌՃԹ (= 1660)»։ Shtu' J.—M. Thierry, Monastères arméniennes du Vaspurakan, VII, Revue des Études Arméniennes, t. X, 1973—1974, p. 215: Ժամանակագրական տվյալները, անունը և «մէմար» կոչումը թույլ չեն տալիս արդյոք նույնացնել նրան այս «մէմար» խաչերի հետ:

²⁵ Հոր անունը փաստաթղթում եղծված է:

²⁶ Մանոթ. Ստավրինդիսի. այս Աբրոնի մասին տե՛ս «Ελλάς» հանդես, 7-րդ հատոր, էջ 256:

15 (748)

ՍԻՏԻԱՅԻՆ²⁷ ԱՐՄԵՆԻ [ԳՅՈՒՂԻ] ԲՆԱԿԻՉ ԻԲՐԱՀԻՄ ԷՖԵՆԴԻՆ

Հ. թ. Դ., գիրք 5, էջ 150

1085 թ. մուհառեմ ամսի 20-ին
26 ապրիլի 1674 թ.

Հ. Թ. Սիտիայի շրջանի Արմենի գյուղի բնակիչ Աբդուլլահի որդի Վայրամը, ներկայանալով այս Հոգևոր ատյանի առջև, նույն գյուղի բնակիչ Ահմետի որդի Իբրահիմ էֆենդիի ներկայությամբ ցուցմունք տվեց և խոստովանեց, որ նրանից ստացել է 15 ասլան դուրուշ, 20 միստատ ձիթայուղ և 10 մուղուր ցորեն։ Դա իր պարտքն է և պիտի հստուցի այսօրվանից հաշված մեկ տարվա ընթացքում։

էջ 177

16 (798)

ՀՈՒՅՆ ԱՂՋԿԱ ՀԵՏ ԱՄՈՒՍՆԱՅԱՄ ՀԱՅ

Հ. թ. Դ., գիրք 4, էջ 339

1095 թ. ռեջեբ ամսի 11-ին
24 հունիսի 1684 թ.

Հ. Թ. Աբրահամի որդի հայ Հակոբը, քրիստոնյա էրզինայի որդի անշահահաս Գասպարի հոգաբարձուն, Կանդիայի հայ քահանա Հովսեփի²⁸, Միհրանի որդու ներկայությամբ ցուցմունք է տալիս, թե նա (քահանան) 100 դուրուշի դիմաց էրզինայի ամուսին Վանլը (Վանեցի) հային վաճառել է Վեքիլ Խարջ աղա թաղամասում և չափերով և դրացիներով հայտնի մեծ տունը։ Վանլըն տունը գնելուց հետո այն վաճառեց իր կնոջը՝ էրզինային։ Վեքիլնիս մահից հետո, ժառանգության իրավունքով, խնդրո առարկա տունն անցավ իր օրինավոր որդի Գասպարին։ Հայ քահանա Հովսեփը հաստատում է այդ։

էջ 797

17 (799)

ԾՈՎԱՀԵՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՅ ՄԱԿՐԻԳԵՈՐԳԻԻ ՖՐԵԳԱՏԻ ՀԱՓՇՏԱԿՈՒՄՆ ՈՒ ԿՈՂՈՊՏՈՒՄԸ

Հ. թ. Դ., գիրք 4, էջ 339

1095 թ. ռեջեբ ամսի 15-ին
28 հունիսի 1684 թ.

Կանդիայի հայ առևտրական Մեկետի որդի Ալեքսեն դատ է հարուցում, նազանի որդի հրեա Դավիթի դեմ առ այն, որ նա տիրացել է 160 կտոր աստառի, որ ինքը, Ալեքսեն, ուրիշ կերպասների հետ գնել էր Զմյուռնիայում և բարձել Մակրիգեորգիի ֆրեգատը։ Բայց ֆրեգատը դեպի Կրետե նավարկելիս հափշտակվեց ծովահենների կողմից և կապուտը նրանց կողմից վաճառվեց։

²⁷ Կրետեի հյուսիս-արևելյան լասիթիոն նահանգի քաղաք և շրջան։

²⁸ Կանդիայի (Հերակլիոն) սր. Հովհաննես Կարապետ եկեղեցու բակում պահպանվում է, ամենայն հավանականությամբ, այս Հովսեփ քահանայի գատեր 1701 թվակիր տապանաքարը. «Այս է տապան և դամբարան Աննայի, որ էր նա դուստր Օվսէփի Տ(եառ)նաշոջափ քահանայի...» [Հ. Բարթիկյան, Կրետե կղզու Հերակլիոն քաղաքի սր. Հովհաննես Կարապետ եկեղեցու հայերեն տապանագրերը (Եղատմա-բանասիրական հանդես, 1984, № 1)]:

Դեյիրմենլիկ²⁹ կղզում: Վերոհիշյալ 160 կտոր աստառը այժմ գտնվեց պատասխանորդ Դավթի ձեռքում, որից էլ Ալեքսեն պահանջում է այն ստանալ: Դավթին իր պաշտպանականում ասաց, թե կտորեղենը գնել է ռեթիմնացի ոմն հարկատուից: Դատ հարուցող հայը ժամանակ է խնդրում վկաներ բերելու՝ իր հայցի ապացուցման համար:

Էջ 210—211

18 (829)

ՊԵՏԻԱԴԱ ՇՐՋԱՆԻ ԱՊՈՍՏՈՒԻ ԳՅՈՒՂԻ ՔՐԻՍՏՈՆՅԱՆՆԵՐԻ ԲՈՂՈՔՆԵՐԸ

Հ. Թ. Դ., դիրք 4, էջ 385

1096 թ. ռեբի՝ յուլ-լ-ախըր ամսի 20-ին
25 մարտի 1685 թ.

Հ. Թ. Այս սրբազան ատյանին ներկայացան Պեդիադա շրջանի Ապոստոլի գյուղի բնակիչներից Տեր Միխայլի որդի Տեր Զորջին, Միխայլի որդի Գեորգիոսը, Սահակի³⁰ որդի Յաննիսը, Միխայլի որդի Յաննիսը, Միխայլի որդի Գեորգիոսը, Յորգիի որդի Նիկոլայոսը, Յաննիի որդի Պետրուլիսը և այլ հարկատուներ, որոնց անուններն ու հայրանունները հայտնի են և անձամբ ներկայացնում են ինչպես իրենց անձը, այնպես էլ լիազորներն են այս գյուղի այլ բնակիչների, որոնք դատ հարուցեցին ընդդեմ Հյուսիսի որդի Յահյա լեւեբիի՝ իրենց գյուղի հարկահավաք Հյուսիսի աղայի ներկայացուցչի, և նրա ներկայությամբ տվեցին հետևյալ ցուցմունքը. «Յահյա լեւեբին մեր գյուղի գլխահարկը, այգիներից և մեր բերքից հարկերը լրիվ գանձելուց հետո, անարդար և ապօրինի կարգով մեզանից առավ հարյուր հիսուն մուզուր ցորեն: Խնդրում ենք, որ նրան հարց տրվի և վերադարձվի վերոհիշյալ ցորենը: Հարց տվեցինք պատասխանորդին, որն ասաց, թե «այս ցորենը դատ հարուցողներից գնել էր նավատորմիդի բեյերից Մեհմետ բեյը, որը և ինձ հանձնարարեց այն առնել»: Դատ հարուցողների կողմից այդ բանը ժխտելու կապակցությամբ, Յահյա լեւեբիից պահանջվեց իր ասածները հաստատող վկաներ ներկայացնել: Չկարողանալով վկաներ ներկայացնել, նա պահանջեց, որ իր դեմ դատ հարուցողները երդամբ հաստատեն իրենց ցուցմունքը: Նրանք երդվեցին, որից հետո Յահյա լեւեբին դատապարտվեց վերադարձնել 150 մուզուր ցորենը:

Էջ 234

19 (881)

ԿԱՆԴԻԱՅԻ ՀԱՅԻ ՓՈԽՐ ԵՎ ՀԱՅԱԳՈՐԾՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ

Հ. Թ. Դ., դիրք 4, էջ 481

1096 թ. շեմադիյուլ-եվդել ամսի 28-ին
1 մայիսի 1685 թ.

Կանդիայի կառավարիչ էսսեյիտ Մուստաֆա փաշայի հետ այսօր համաձայնության եկանք, որպեսզի յուրաքանչյուրիս տրվի հարյուրական մուզուր ցորեն՝ քսան օր հաց թխելու համար: Յորենի գինը որոշվեց Կանդիայի երեք մուզուրը՝ մեկ զուրուշ: Մեր կողմից թխվելիք հացը լինելու է հարյուր երեսուն

29 Ծանոթ. Սաավրինիդիսի. Միլոս կղզին թուրքերն անվանում էին Դեյիրմենլիկ: Միլոս հունարեն նշանակում է չրաղաց (թուրքերեն՝ գեյիրմեն), բայց թուրքերը, ելնելով անվան արտասանությունից, սխալ են հասկացել: Հունարենում Μήλος է, որ ծագում է μῆλος խնձոր բառից, այնինչ չրաղացը գրվում է μύλος: Երկուսն էլ միակերպ են հնչում:

30 Սաավրինիդիսը տառադարձնում է Σατζα: Հուլյն լինելու դեպքում պիտի գրեր 'Ισατζ: Սա ցույց է տալիս, որ հիշյալ Սահակը հայ է, և որ հիշյալ Ապոստոլի գյուղը ուներ նաև հայ բնակչություն:

դիրհեմ³¹ քաշով: Պարտավորվում ենք ցորենի արժեքը վճարել քսաներորդ օրը: Հացագործների այս հայտարարությունը արձանագրվեց հազար իննսուն-վեց թվականի վերջին:

Վկաները. էքմեքչի բաշը³² Ալի աղա, Մուրադի որդի Ալի շելերի, Մեհմետ-տի որդի Օսման շելերի, Վելիի որդի Ռեշեք շելերի և ուրիշներ:

Կանդիայի հացագործներ և հացի փոխը.

Հայ Բենլի՝ Աղա շարշը³³, 26-րդի Մուստաֆա բեշե՝ Աղա շարշը, հայ Քուրթ՝ Մահմուտ քեռիսուղա շարշը, Ջեքեշիների օղաբաշը³⁴ Մեհմետ բեշե՝ Նուղարեթի դարպասի դիմաց, Ալեքսանդրոս՝ Մահմուտ աղա շարշը, Երլիների օղաբաշը³⁵ Ալի բեշե՝ Քեռիսուղա բեշ շարշը, թուռնաշի³⁶ Բաբա Ալի՝ Քեռիսուղա բեշ շարշը, Կարագյոզ՝ Միվրի շեշմե, Քեռիսուղա բեշ շարշը, Իսմայիլ բեշե՝ Խանիայի դարպասում, 1-ին Երլի կուլուփ Արդի բեշե՝ հրեական թաղ, Ջորջի՝ հրեական թաղ, Մաստրո Յաննիս՝ նավահանգստի դարպասի ներսում, Կարա Մեհմետ բեշե՝ Իբրահիմ փաշա շարշը, հարկատու Միխայիլ՝ Թահմիսի մոտ, Սիմեոն հայ՝ հայ Բենլիի հացի (փռան) դիմաց:

էջ 269—270՝

20 (949)

ՀԱՅԻ ԳՆԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ: ԿԱՆԴԻԱՅԻ ՀԱՅԱԳՈՐԾՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

2. Թ. Դ., գիրք 2, էջ 414

1099 թ. դի-1-կազե ամսի 17-ին:

13 սեպտեմբերի 1688

2. Թ. Կանդիայի կառավարիչ վեզիր Մուստաֆա փաշայի՝ հացի գին սահմանելու վերաբերյալ քաղաքի Հոգևոր ատյանի նախագահին ուղղված գրավոր բույրուլտուրի³⁷ համաձայն Հոգևոր ատյան հավաքվեցին երլի ենիշարների քեռիսուղա Շարան աղան, Մահմուտ աղա մզկիթի իմամ Ալի էֆենդին, երլի ենիշարների պետը և այլ աստիճանավորներ, որոնք հետևյալ կերպ սահմանեցին հացի գինը. երկու մուզուր ցորենը՝ մեկ ղուրուշ, որպես հիմք ունենալով մեկ ղուրուշը 44 փարա կամ 146 սպիտակ: Հացի գինը՝ 90 դիրհեմը մեկ սպիտակ: Կանդիայի բոլոր հացագործներն այս գներն ընդունելի համարեցին, որով ստորագրեցին սույն փաստաթղթի ներքո:

Հացի փոխը. քեռիսուղա Ալի բեշե, Կարա Մեհմետ բեշե, Իսմայիլ բեշե, Օմեք բեշե, Ալի բեշե, Մուստաֆա բեշե, Մուսա բեշե, Հյուսեին բեշե, Արդի բեշե, ընդամենը՝ 9 հացի փուռ:

Հետևում է անհավատ³⁸ հացագործների ցուցակը: Բենլի հայ, Ալեքսանդրոս, Կարագյոզ, Մաստրոյաննիս, Բամբակիո Միխայիս, Մանիոս, Բեխլի-վան: Ընդամենը 7 հացի փուռ:

Ցորենի գնի հիման վրա որոշվեց. երկու մուզուր ցորենը՝ մեկ ղուրուշ, մեկ ղուրուշը՝ քառասուն չորս փարա: Հացը՝ 90 դիրհեմ՝ մեկ սպիտակ:

Կարկանդակագործների համաքարության նախագահին ցուցմունք տրվեց, որ կարկանդակի գները սահմանվեցին հետևյալ կերպ.

կարկանդակ մսով՝ 35 դիրհեմ, ձիթայուղով՝ 35 դիրհեմ, թահինի ձեթով՝ 50 դիրհեմ:

էջ 310

31 Կշեի չափ, հավասար է 3,12 գրամի:

32 Հացագործների (համաքարության) ավագ վարպետ:

33 Շուկա:

34 ենիշարների պետի օգնական:

35 Նահանգային կայազորի պետի օգնական:

36 ենիշարների մի զորամասի անունը:

37 Գրավոր հրաման, կարգադրություն:

38 Այսինքն ոչ մահմեդական: Մեծ մասը հույներ են, մի քանիսը՝ հայեր:

21 (1142)

ԱՌՈՒՄԱԽ

Հ. Թ. Դ., գիրք 8, էջ 134

1105 թ. շաալ աժսի 15-ին
8 հոժիսի 1694 թ.

Հ. Թ. Օհանի որդի Պողոսը, Կանդիա քաղաքի Վեբիլ-հարչ Ռեչեբ աղայի բնակիչ, 80 աալան ղուրուշի դիժաց Յաննիի որդի Մանիոյին վաճառում է իր մի տունը, որ գտնվում է հիշյալ թաղում: Տոժը երկու կողմից հարում է փողոցին, իսկ մյուս երկու կողմից՝ Օսման բեշեի և Ալի աղայի տներին, և բաղկացած է առաջին հարկի երեք սենյակներից, երկու հորից, խաղողի երեք որթատունկերից, մեկ շրավաղանից, շորս նոնենիներով մեկ պարտեզից, մեկ տանձենուց և պտղատու ալ ծառերից:

էջ 444—445

Μεταφράσεις Τουρκικών Ιστοριών ἑγγραῶν ἀφορώντων εἰς τὴν ἱστορίαν τῆς Κρήτης ὑπὸ Νικολάου Σταυρινίδου, τόμος Γ' ἑγγραφα τῆς περιόδου ἐτῶν 1694—1715, ε-εἰρας 1105—1127, Ἑράκλειον Κρήτης 1978.

Նիկոլայոս Ա. Ստավրինիդիս, Կրեթեի պատմության վերաբերյալ բուրժական պատմական փաստաթղթերի բազմաճյուղ, հատոր երրորդ, մ. թ. 1694—1715 և հիշերթի 1105—1127 թթ. շրջանի փաստաթղթեր, Կրեթեի Հերակլիոն, 1978:

22 (1192)

ՀԱՋԻ ՄԵՀՄԵՏ ՓԱՇԱՅԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:
ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ ԸՆԴԴԵՄ ԿԱՆԴԻԱՅԻ ՆԱԽԿԻՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ ՖԵԴԿ
ՀԱՋԻ ՄԵՀՄԵՏ ՓԱՇԱՅԻ

Հ. Թ. Դ., գիրք 8, էջ 23

1105 թ. զի-լ-հիշչե աժսի 23-ին
14 օգոստոսի 1694 թ.

Հ. Թ. Խուլավերդիի որդի Սերգիզից, Նուլերի որդի Սեֆերից, Մուրադի որդի Խաչերից³⁹, Բաղդադիի որդի Սադիշից, Օվանեզի որդի Կիլիշից, բոլորն էլ հայեր, Կանդիայի բնակիչներ. «...Երբ ութ աժիս առաջ քաղաքում ինչ-որ սպանություն եղավ, նա⁴⁰ մեզ բանտ նետեց և ապօրինի ու կամայականորեն առավ 170 աալան (ղուրուշ), որոնք և պահանջում ենք համաձայն հրապարակված կայսերական բարձր հրամանի»: Դատախազի լիազորություններով օգտված անձի դրական վճռով որոշում է հանվում այն մասին, որ Սուլթանի արտակարգ բանաճնացի միջոցով զանձվեն և վերադարձվեն դատ հարուցողներին:

էջ 21

39 Ն. Ստավրինիդիսը հոնարեն տառերով գրել է խաճեր:

40 Այսինքն Կանդիայի նախկին կառավարիչ Ֆեդեկ հաշի Մեհմետ փաշան: Հիշյալ անձավորության դեմ եղել են բազմաթիվ ալլ ցուցմունքներ, որոնք Ստավրինիդիսն առանձին առանձին հրատարակել է: Մենք մեշ ենք բերել միայն հայերին վերաբերողները:

23 (1377)

ՀԱՅԻ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ԱՏՅԱՆՈՒՄ

Հ. Ս. Դ., դիրք 11, էջ 7

1107 թ. շեմադիյու-լ-եվլեկ ամսի 9-ին
16 գեկտեմբերի 1695 թ.

Հ. Թ. Ոսկերիչներից Մարգարի որդի Կարապետը, Կանդիայի Դեֆտերդար Ահմետ փաշա թաղի բնակիչ, դատ է հարուցում Յանբայի որդի, Կանդիայի ժամանակավոր բնակիչ պարսկահայ Ավագի դեմ, որովհետև վերջինս, թեև չորս ամիս առաջ նշանվեց ատյանում ներկա իր դուստր Սառայի հետ, իրեն (հորը) տվեց մեկ մատանի, այժմ հրաժարվում է ամուսնանալ։ Պատասխանորդի այն ցուցմունքի կապակցությամբ, թե Սառայի հետ նշանվելու ժամանակ իր զոքան-լին տվել էր տասը ոսկե ֆլորին, ներկայանում են չորս հայ վկաներ, որոնք հաստատում են նրա ասածը։ Ի վերջո հոր համաձայնությամբ հոգևոր ատյանում, ութը հայ վկաների ներկայությամբ⁴¹ կայանում է ամուսնուրջունը, կոնխավ շտրված 6000 սպիտակ ամուսնական նվերով։

էջ 153—154

24 (1421)

ՀԱՅՈՒՀՈՒ ՊԱՏԿԱՆՈՂ ՄԵՍ ՏՈՒՆ

Հ. Ս. Դ., դիրք 11, էջ 65

1107 թ. ունեբ ամսի 30-ին
5 մարտ 1696 թ.

Հ. Թ. Սերգեյի դուստր հայուհի Խանան և նրա որդին՝ Հովհաննեսի որդի Կապլանը, Կանդիայի Դեֆտերդար թաղի բնակչուհի, Վելիի դուստր Ալշին, Ալի չավուշի կնոջը, 193 ասլան դուրուշով վաճառում են վերոհիշյալ թաղում գտնվող մի տուն։ Այն սահմանակից է մի կողմից Հաջի Մուստաֆայի տանը, մյուս կողմից՝ Նրի Աղասիի թաղային փողոցին, իսկ մյուս երկու կողմից՝ հանրային ճանապարհին։ Տունը բաղկացած է գրսից մեկ ճաշարանից, մեկ խանութից, երկրորդ հարկի մեկ սենյակից, տղամարդկանց մեկ սենյակից, մեկ ջրամբարից, առաջին հարկի երեք պահեստներից, մեկ փռից, իսկ ներսից՝ առաջին և երկրորդ հարկի երկու սենյակներից, ջրի երեք ծորակներից, ջրի մեկ ավազանից և պտղատու և ոչ պտղատու ծառերից։

էջ 179

25 (1442)

ՀԱՅ ՀԱՅԱԳՈՐԾ ԿԱՆԴԻԱՅՈՒՄ

Հ. Թ. Դ., դիրք 11, էջ 100

1107 թ. շեալ ամսի 15-ին
18 մայիսի 1696 թ.

Հ. Թ. Դիարբեքիր քաղաքի Ազիզ օղլու թաղի բնակիչ և Կանդիայում հացագործի արհեստով զբաղվող հայ Բենլին մեռավ։ Իր թողած ունեցվածքը՝ 1300 դուրուշ, նա կտակեց Դիարբեքիրում բնակվող կնոջը, անշափահաս դստերը և եղբորը՝ Գյուլուին։

էջ 192

⁴¹ Փաստաթղթում, հարկավ, եղել են այս ութ հայ վկաների անունները, որոնք Ստավրինի-գիսը չի բերել։

26 (1444)

ՈՍԿԵՐԻՉՆԵՐԻ ՀԱՄՔԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՆՇԱՆԱԿՈՒՄ

Հ. Թ. Դ., գիրք 11, էջ 106

1108 թ. մուհառեմ ամսի 29-ին
28 օգոստոսի 1696 թ.

Հ. Թ. Կանդիայի ոսկերիչների համաքարոթյունից Մուստաֆան, Իրրահիմը, Բաբա ուստան, Ուստա Յորդին, Իլիան, Յակոն, Արսենը, Ջանին, Ջորջին, Սերգիսը, Կարապետը, Անտոնը, Մարգրեհեն և մնացածները, ներկայանալով Հոգևոր ատյան, հաղորդում են, որ Կույումջի բաշի⁴² են նշանակում Ուստա Բյամիլին, որպեսզի նա հսկի, պատժի և Հոգևոր ատյան հայց ներկայացնի ոսկերիչներից նրանց դեմ, որոնք խարդախում են ոսկին, ինչպես և արծաթը, պատրաստում են կեղծ ու քաշը պակաս զարդեր:

էջ 193

27 (1514)

ԿԱՆԴԻԱՅՈՒՄ ՀԱՅ ՆԵՐԿԱՐԱՐ

Հ. Թ. Դ., գիրք 9, էջ 86

1111 թ. օհրի՝ յուլ-եմվեի ամսի 12-ին.
7 սեպտեմբերի 1699 թ.

Հ. Թ. Չորս տարի առաջ վախճանված Կանդիայի Վեբիլ հարջ թաղի բնակիչ բոյաջի⁴³ հայ Պողոսի թողած ունեցվածքը նա կտակեց իր կնոջը՝ Մերիեմին, անշափահաս որդիներ Կարապետին, Անտոնին, Կազերին, Արոյին, չափահաս դուստր Մարգիտոյին և անշափահաս դուստր Ղիյմեթին: Այն պատճառով, որ նրա մահվան ժամանակ նրա ունեցվածքը գրի չառնվեց, այն գրի է առնվում այժմ: Հատուկ ցուցակում հիշվում են ներկատնում գտնվող կահկարասին, արհեստանոցի և տնային իրերը, որոնց մեջ՝ մեկ հրացան, մեկ ատրճառակ և երեք թուր:

էջ 229

28 (1861)

ՍՊԻՆԱԼՈՆԳԱՅԻ ՄԻ ԳԵՐՈՒ ՄԱՀԸ

Հ. Թ. Դ., գիրք 14, էջ 56

1128 թ. չեմազիյուլ-եմվեի ամսի 22-ին.
14 մայիսի 1716 թ.

Կրետե կղզու պայծառափայլ և վսեմափայլ կառավարիչ Ալի փաշայի շքախմբից Ավազ աղան, թող նրա փառքն անվերջ լինի, նշանակված առաջինի կողմից Սպինալոնգա բերդի գերի վերցված և ստրկացված անհավատ խայրիների⁴⁴ հավաքմանն ու փոխադրմանը համար, բերդ, որը հաջողվեց առնել վերջերս, ներկայանալով Հոգևոր ատյանի առջև, տվեց հետևյալ ցուցմունքը. «Երբ համաձայն տրված հրամանի նախաձեռնեցի Կանդիայի նահանգի վաթսուն անհավատ խայրիների հավաքում և նրանց փոխադրում էի Կանդիայի բերդը, Միսելի Վարդիկյան անունով մի գերի, միջին հասակով, գանգուր մորուքով, ճանապարհին բնական մահով մեռավ ու սատակեց՝ Կանդիայի բեր-

⁴² Ոսկերիչների զուխ (պետ, նախագահ):

⁴³ Բոյաջի, ներկարար:

⁴⁴ Խայրն նշանակում է դավաճան: Թուրքերն այդպես էին անվանում իրենց տիրապետության դեմ պայքարի ելած հույն ապստամբներին: Հիշյալ ապստամբությանը, ինչպես երևում է մասնակցել են նաև հայեր, որոնցից մեկի անունն ու ազգանունն է հայտնի՝ Միսելի Վարդիկյան:

դից դուրս: Խնդրում եմ Հոգևոր ատյանի կողմից մարդ ուղարկվի և այդ հաստատելուց հետո կազմի անհրաժեշտ արձանագրությունը: Հոգևոր ատյանի կողմից ուղարկվեց մկանա Իրահիմ էֆենդին, որը, ներքոնշյալ մահմեդականների հետ զնալով և տեղում ստուգելով հիշյալ սատակածի դիակը, պարզեց, որ նա Կանդիայի բերդը զալու ճանապարհին իսկապես սատակել է բնական մահով: Հոգևոր ատյանից ուղարկված մկանան արձանագրեց դա և զալով Հոգևոր ատյան, արձանագրեց այդ գործը հազար հարյուր քսան ութ թվականի շեմադիլու-լ-եվլել ամսի քսաներկուսին:

Էջ 410—411